ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1571-Ա « 24 » մարտի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՄԱՍՍԱՉՈՒՍԵԹՍ ՆԱՀԱՆԳԻ ՔԵՄԲՐԻՋ ՔԱՂԱՔ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի 19.03.2026 թվականի №Ն/16686-26 զեկուցագիրը, Քեմբրիջ–Երևան քույր քաղաքների ասոցիացիայի նախագահ Ռոքսան Էթմեքջյանի հրավերը՝ Քեմբրիջի քաղաքապետարանի, մարդկային ծառայությունների վարչության և խաղաղության հանձնաժողովի գործընկերների հետ հանդիպումներին մասնակցելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանին՝ 2026 թվականի ապրիլի 11-ից 20-ը ներառյալ գործուղել Ամերիկայի Միացյալ Նահանգների Մասսաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաք:

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերն իրականացվելու են Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցների հաշվին:

3.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Գևորգ Ղարիբյանի բացակայության ընթացքում երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար Վահե Գրիգորյանին:

4.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ